Արձանագրություն N 5

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար դիզելային գեներատորի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

11 հունվարի 2023թ.
ժամը՝ 10.00

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Սամսոնյան, Վ.Մացակյան, Ա.Լալայան, Վ.Քեռյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	վթարային գեներատորներ	11000000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 09.01.2023թ.-ին ժամը 10:00-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 10.01.2023 թ.-ին ժամը 10:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Օրբելի 33Ա, 15	098020304	deltant@mail.ru:
2	Յունիմայն ՍՊԸ	ք.Երևան, Սասունցի Դավիթ 70/8	+37411202508 / +37496202507	info@unimine.am
3	Ջի Էս Թի Փաուեր ՍՊԸ	Երևան, Գալշոյան 15/3	+37455489886	info@gstpower.am

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/4 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների, հրավերում կատարված փոփոխության մասին

Հրավերի վերաբերյալ 26.12.2022թ., 03.01.2023թ. ստացվել են հարցումներ և 27.12.2022թ., 04.01.2023թ. տրամադրվել են պարզաբանումներ:

29.12.2022թ. կատարվել է Հրավերի փոփոխություն:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ	9000000	20 %	10800000	7462500	20 %	8955000.00	
	Յունիմայն ՍՊԸ	8750000	20 %	10500000	7550000	20 %	9060000.00	
	Ջի Էս Թի Փաուեր ՍՊԸ	9100000	20 %	10920000	8213000	20 %	9855600.00	

Աճուրդն ամփոփվել է 10.01.2023թ. և Համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- Հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն բացակայում է: Մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը նշված է հայերեն: Մասնակցի ղեկավարի պաշտոնը:

- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում՝ Հավելված 1.2 Ընթացակարգը նշված է «գնանշման հարցում» անհրաժեշտ է նշել «էլեկտրոնային աճուրդ»: 4-րդ բաժնի 4.3 ենթաբաժնի 4.3.2 և 4.3.3 կետերը ենթակա են շտկման, անհրաժեշտ է վարչատարածքային միավորը նշել Գեղարքունիքի մարզ, քանի որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները, իսկ 4.3.2 կետում նշել համապատասխան համայնքի անվանումը:

- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Մոդել», «Ապրանքային նշան», «Ֆիրմային անվանում», «Արտադրող», սյունակները ենթակա են շտկման, անհրաժեշտ է նկարագրել /նշել/ առաջարկվող ապրանքի մոդելը, ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, արտադրողը: «Տեխնիկական բնութագիր» սյունակում նշված է միայն վթարային գեներատոր, անհրաժեշտ է eauction.armeps.am համակարգի միջոցով նշել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ Հանձնաժողովը որոշեց 11.01.2023թ. նիստը կասեցնել՝ առաջարկելով Ընթացակարգի մասնակից ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 13.01.2023թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 13.01.2023թ. ժամը 10:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ-ի հայտը, այդ թվում՝ eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման վերաբերյալ

13.01.2023թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ -ին հայտարարել ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցներ՝ Յունիմայն ՍՊԸ-ի և Ջի Էս Թի Փաուեր ՍՊԸ-ի հայտերը մերժել:

10.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Մերուժան Սամսոնյան

_____ Վահան Մացակյան

_____ Անժելա Լալայան

_____ Վազգեն Քեռյան

Քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան